

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լեռնային Ղարաքաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաքաղի Հանրապետության 2000 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-119 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Արցախի Հանրապետության տարածքում իրենց լիազորությունների շրջանակներում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված են՝

1) Արցախի Հանրապետության առողջապահության նախարարությունը.

2) Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունը.

3) Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությունը.

4) Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը.

5) Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունը.

6) Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը.

7) Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունը.

8) Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը.

9) Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը («Հարկային ծառայության մասին» Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում՝ հարկային մարմինը).

10) Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը.

11) Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը.

12) Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը.

13) Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը.

14) լիցենզավորող պետական մարմինները:

Պետական մարմինների կամ դրանց լիազորությունների փոփոխությունների դեպքում ստուգում իրականացնող նշված մարմինների լիազորությունները իրականացնում են դրանց իրավահաջորդ կամ համապատասխան լիազորություն ունեցող մարմինները:»:

Հոդված 2. Օրենքի 2.1-ին հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությունից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի համաձայնությամբ» բառերը:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի երկրորդ պարբերությունում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական ծառայության» բառերը փոխարինել «Հարկային մարմնի» բառերով.

2) 3.1-ին մասի 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետից» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Նախագահից» բառերով:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի առաջին պարբերությունում և երկրորդ պարբերության «գ» կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի գրավոր հանձնարարությամբ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Նախագահի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ» բառերով:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական

ծառայության պետի» բառերը փոխարինել «հարկային մարմնի ղեկավարի» բառերով:

Հոդված 6. Օրենքի վերնագրում, տեքստում, հավելվածներ 2-ում, 2.1-ում և 3-ում, բացառությամբ ««Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված ժամկետում» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1998 թ. օգոստոսի 18-ի թիվ 163 որոշմամբ հաստատված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների, անհատ ձեռներեց հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների ստուգումների կազմակերպման և անցկացման կանոնակարգը» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 28
Ստեփանակերտ
ՀՕ-87-Ն